ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՌՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2022թ. մարտի 11-ի թիվ 629 որոշմամբ

ՀՌՀ ՌԵԿՏՈՐ՝ ԴԱՐԲԻՆՅԱՆ Ա.Ռ.

Բակալավրի կրթական ծրագրով Հայ-Ռուսական /Սլավոնական/ համալսարանի հայկական բաժանմունքում 2022-2023 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցմամբ ընդունելության

ԿԱՆՈՆՆԵՐ

1. Սույն կանոնները սահմանում են Հայ-Ռուսական /Սլավոնական/ համալսարանի (այսուհետ ՀՌՀ) հայկական բաժանմունքի բակալավրի կրթական ծրագրով 2022-2023 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցմամբ (այսուհետ համապատասխան ՀՌՀ-ի առկա ուսուցում, ՀՌՀ-ի հեռակա ուսուցում) ընդունելության կարգը:

2. Սույն կարգը մշակվել է հաշվի առնելով՝
   - ՀՀ «Կրթության մասին» 14 ապրիլի 1999 թ. № ՀՕ-297 օրենքի դրույթները;
   - ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» 14 դեկտեմբերի 2004 թ. № ՀՕ- 62-Ն օրենքի դրույթները;
   - ՀՀ Կառավարության 26 ապրիլի 2012 թիվ 597-Ն «Հայաստանի Հանրապետության պետական եվ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 686-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման(փոփոխ. ՀՀ Կառավարության 01 ապրիլի 2021 թ. N 469-Ն որոշում) դրույթները;
   - ՀՀ կրթության և գիտության նախարարի 19 հուլիսի 2016 թվականի N 743-Ն հրամանով հաստատված «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կանոնների» (փոփոխ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 հուլիսի 2021 թ. N 49-Ն) դրույթները:

3. ՀՌՀ-ի առկա ուսուցումը կազմակերպվում է պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի) հիմունքներով: Ընդունելության

տեղերի քանակը ըստ մասնագիտությունների յուրաքանչյուր տարի հաստատվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ:

4. ՀՌՀ-ի հեռակա ուսուցումը կազմակերպվում է ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի) հիմունքներով: Ընդունելության տեղերի քանակը ըստ մասնագիտությունների յուրաքանչյուր տարի հաստատվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով:

5. ՀՌՀ-ի առկա ուսուցումը կազմակերպվում է ըստ հետևյալ մասնագիտությունների և ընդունելության քննությունների.

Ծածկագիր	Մասնագիտությունը	Ընդունելության քննությունները			
		մրցութային			ոչ մրցութային
061101.02.6	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգլ(գ)		Հլգ(գ)*
056802.01.6	Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Օտլ(գ)		Հլգ(գ)*
041301.01.6	Կառավարում	Մ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
041201.01.6	Ֆինանսներ	Մ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
101501.01.6	Զբոսաշրջություն	Հլգ(գ)	Օտլ(գ) կամ Մ(գ)		
042101.00.6	Իրավագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
031201.01.6	Քաղաքագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
031801.01.6	Միջազգային հարաբերություններ	ՀՊ(գ)	Հլգ(գ)		
023201.02.6	Միջմշակութային հաղորդակցություն /Անգլերեն լեզու/	Անգլ(գ)	Հլգ(գ)		
032101.01.6	Լրագրություն	Հլգ(գ)	Օտլ(գ)		
022801.02.6	Թյուրքագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
022801.03.6	Իրանագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
022801.01.6	Արաբագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
022801.04.6	Հնդկագիտությյուն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*

* Նշված ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից՝ լրացնելով այդ առարկայի պետական ավարտական քննության գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

6. ՀՌՀ-ի հեռակա ուսուցումը կազմակերպվում է ըստ հետևյալ մասնագիտությունների և ընդունելության քննությունների.

Ծածկագիր	Մասնագիտությունը	Ընդունելության քննությունները			
		մրցութային			ոչ մրցութային
041301.01.6	Կառավարում	Մ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
041201.01.6	Ֆինանսներ	Մ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
101501.01.6	Զբոսաշրջություն	Հլգ(գ)	Օտլ(գ) կամ Մ(գ)		
042101.00.6	Իրավագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
031201.01.6	Քաղաքագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
031801.01.6	Միջազգային հարաբերություններ	ՀՊ(գ)	Հլգ(գ)		
023201.02.6	Միջմշակութային հաղորդակցություն /Անգլերեն լեզու/	Անգլ(գ)	Հլգ(գ)		
032101.01.6	Լրագրություն	Հլգ(գ)	Օտլ(գ)		

7. ՀՌՀ բակալավրիատում ուսումնառությունն իրականացվում է հայոց լեզվով (ըստ ՀՀ և ՀՌՀ չափորոշիչների):

8. ՀՌՀ բակալավրիատի շրջանավարտներին հանձնվում են ՀՀ պետական նմուշի դիպլոմներ:

9. ՀՌՀ-ի առկա ուսուցման ընդունելության դիմում-հայտերի, փաստաթղթերի ընդունումը և ընդունելության մրցույթն անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող ընդունելության կարգի:

10. ՀՌՀ-ի հեռակա ուսուցման ընդունելության դիմում-հայտերի եվ փաստաթղթերի ընդունումը, ընդունելության մրցույթը կատարում է ՀՌՀ-ն՝ ըստ մասնագիտությունների,

հատկացված տեղերի և միավորների՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող հեռակա ուսուցման ընդունելության կանոնների:

11. Վճարովի ուսուցման համակարգ ընդունվելու համար մրցույթը հաղթահարած դիմորդների հրամանագրումը կատարվում է վճարովի կրթական ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց և առաջին կիսամյակի համար ուսման վարձի վճարումը կատարելուց հետո: Վճարովի կրթական ծառայությունների մատուցման պայմանագրերը կնքելու վերջնաժամկետը **առկա ուսուցման** համար սահմանվում է մինչև տվյալ տարվա **սեպտեմբերի 9-ը**, իսկ **հեռակա ուսոցման** համար՝ **հոկտեմբերի 21-ը**: